ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՎՏՈՄԵՔԵՆԱՅԻ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՍՏՈՒԳՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N «ՀՀԽԱ-ՄԱԾՁԲ-06/25»

ք. Երևան «10» փետրվար 2025 թ.

«Հանրային հեռարձակողի խորհրդի աշխատակազմ» ՊՀ-ն, ի դեմս Խորհրդի նախագահ Արա Շիրինյանի, որը գործում է ՀՀ կառավարության 2017 թ.-ի մայիսի 4-ի N 526-Ն որոշման Հավելված 1-ով սահմանված գնումների գործընթացի կազմակերպման կարգի 6-րդ կետի 1-ին ենթակետի և Հանրային հեռարձակողի խորհրդի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Գարանտ Մոթորս» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Դավիթ Շախբազյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է **ավտոմեքենայի տեխնիկական ստուգման ծառայությունների** մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

1.3 Ծառայությունները Կատարողի կողմից մատուցվում են միայն Պատվիրատուի կողմից գրավոր կարգով Կատարողին ներկայացված պատվերի (Պատվիրատուի աշխատակազմի ղեկավարի ստորագրությամբ) հիման վրա:

1.4 Ծառայությունների մատուցումը ներառում է նաև սույն պայամանգրի Հավելված N 4-ով նախատեսված ապրանքների մատակարարման պարտավորությունը:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս կողմից մատուցված պատշաճ ծառայության դիմաց վճարման ենթակա գումարները, իսկ վճարան ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու պատշաճ մատուցված ծառայության դիմաց վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված վճարման ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության պատշաճ մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1) և հանձնման-ընդունման արձանագրության 2 օրինակ (հավելված N 3):

3.2 Հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվում է, եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրությունը չի ստորագրվում և Պատվիրատուն՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.3 Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 7 աշխատանքային օրվա ընթացքում Կատարողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ ծառայությունը չընդունելու պատճառաբանված մերժումը:

3.4 Եթե պայմանագրի 3.3 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.3 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն Կատարողին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության ընդհանուր գինը չի կարող գերազանցել **250,000.0 (երկու հարյուր հիսուն հազար)** ՀՀ դրամը:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը Լայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է պայմանագրի 3-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում՝ ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է համապատասխան հաշվի և հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված ամիսներին, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը:

Ընդ որում վճարում կատարելու նպատակով հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվելու օրվանից հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում Պատվիրատուն վճարման հանձնարարագիրը և հանձնման-ընդունման արձանագրության պատճենը մուտքագրում է լիազորված մարմնի գանձապետական համակարգ, իսկ սահմանված կարգի համաձայն ներկայացված փաստաթղթերի հիման վրա լիազորված մարմինը տվյալ վճարումը կատարում է հանձնման-ընդունման արձանագրությունը գանձապետական համակարգ մուտքագրված լինելու դեպքում՝ սույն պայմանագրի վճարման ժամանակացույցով սահմանված ժամկետներում, հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

4.3 Մատուցված ծառայությունների դիմաց վճարումներն իրականացվում են հետևյալ բանաձևով՝ ՎԳ=ՄԳ/ՆԳxԾxՔ, որտեղ՝

ՎԳ-ն պայմանագրով սահմանված առանձին տեսակի ծառայությունների մատուցման դիմաց վճարվող գումարն է.

ՄԳ-ն ընտրված մասնակցի առաջարկած հանրագումարային գինն է.
ՆԳ-ն ծառայության մատուցման համար սահմանված առավելագույն միավոր գների հանրագումարն է.
Ծ-ն մատուցված ծառայության առավելագույն միավորի գինն է.
Ք-ն մատուցված ծառայության քանակն է:

Ընտրված մասնակցի առաջարկած հանրագումարային գինը (ՄԳ) (ներառյալ՝ ըստ առանձին ծառայությունների) և ծառայության մատուցման համար հրավերով սահմանված առավելագույն միավոր գների հանրագումարը (ՆԳ), ինչպես նաև հրավերով սահմանված մատուցվելիք ծառայության առավելագույն միավորի գինը (Ծ) սահմանվում են սույն Պայմանագրի Հավելված 4-ով:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ծառայությունը սույն պայմանագրով սահմանված ժամկետում մատուցելու, սակայն Պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն սահմանված ժամկետում չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորություններն ամբողջությամբ և պատշաճ՝ պայմանագրով սահմանված պահանջներին համապատասխան կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի գրավոր առաջարկի առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի համար ծառայության մատուցման պահանջը չի վերացել, իսկ Կատարողի գրավոր առաջարկը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե ծառայությունների մատուցման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 7 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավելի քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման շրջանակներից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

7.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

7.11 Սույն պայմանագիրը կազմված է **19** էջից, կնքվում է **երկու օրինակից**, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3, N **3.1 և N 4 հավելվածները** հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է **պայմանագրի մեկ** օրինակ:

7.12 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
«Հանրային հեռարձակողի խորհրդի աշխատակազմ» ՊՀ	«Գարանտ Մոթորս» ՍՊԸ
ք. Երևան, Ալեք Մանուկյան 5	ք. Երևան, Թբիլիսյան խճ.20
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն	Արդշինբանկ ՓԲԸ
Հ/Հ 900011430163	Հ/Հ 2470075092810000
ՀՎՀՀ 01539597	ՀՎՀՀ 01310872
Խորհրդի նախագահ՝ Արա Շիրինյան	Տնօրեն՝ Դավիթ Շախբազյան
/ստորագրություն/ Կ.Տ	/ստորագրություն/ Կ.Տ

Հավելված N 1
«10» վեցերորդ 2025թ. կնքված
N «ՀՀԽԱ-ՄԱԾՁԲ-06/25» ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության							
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	տեխնիկական բնութագիրը*	չափման միավորը	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	մատուցման	
						հասցեն	ժամկետը
1	71631120/1	BMW 523i մակնիշի ավտոմեքենայի ստուգման, տեխնիկական սպասարկման և վերանորոգման ծառայություններ *(*Ծառայությունների տեսակները սահմանված են սույն պայմանագրի Հավելված 4-ում)*	դրամ	ծառայության գինը չի կարող գերազանցել 250,000.0 դրամ	1	ՀՀ, ք. Երևան, ք. Թբիլիսյան խճ.20	Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 2025 թ.-ի օգոստոսի 31-ը

**Փոխարինվող պահեստամասերը (մասեր) պետք է լինեն նոր, չօգտագործված և պիտանիության ժամկետի մեջ:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

«Հանրային հեռարձակողի խորհրդի աշխատակազմ» ՊՀ

ք. Երևան, Ալեք Մանուկյան 5

ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն

Հ/Հ 900011430163

ՀՎՀՀ 01539597

Խորհրդի նախագահ՝ Արա Շիրինյան

/ստորագրություն/

Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ

«Գարանտ Մոթորս» ՍՊԸ

ք. Երևան, Թբիլիսյան խճ.20

Արդշինբանկ ՓԲԸ

Հ/Հ 2470075092810000

ՀՎՀՀ 01310872

Տնօրեն՝ Դավիթ Շախբազյան

/ստորագրություն/

Կ.Տ.

Հավելված N 2
«10» մարտի 2025թ. կնքված
N «ՀՀԽԱ-ՄԱԾՁԲ-06/25» ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	Ծառայության դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2025թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում							
			փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	Ընդամենը
			Ծառայության դիմաց վճարումները չեն կարող գերազանցել							
1	71631120/1	Ավտոմեքենաների տեխնիկական ստուգման ծառայություններ	125,000.0 դրամը	125,000.0 դրամը	250,000.0 դրամը	250,000.0 դրամը	250,000.0 դրամը	250,000.0 դրամը	250,000.0 դրամը	250,000.0 դրամը

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
«Հանրային հեռարձակողի խորհրդի աշխատակազմ» ՊՀ

ք. Երևան, Ալեք Մանուկյան 5
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011430163
ՀՎՀՀ 01539597
• Խորհրդի նախագահ՝ Արա Շիրինյան

/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ
«Գարանտ Մոթորս» ՍՊԸ

ք. Երևան, Թբիլիսյան խճ.20
Արդշինբանկ ՓԲԸ
Հ/Հ 2470075092810000
ՀՎՀՀ 01310872
Տնօրեն՝ Դավիթ Շախբազյան

/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված 3
«10» փետրվարի 2025թ. կնքված
N «ՀՀԽԱ-ՄԱԾՁԲ-06/25» ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝
_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

N	Մատուցված ծառայությունների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց	Ծառայությունն ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 3.1
«10» մարտի 2025թ. կնքված
N «ՀՀԽԱ-ՄԱԾՁԲ-06/25» ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կատարողի անունը
(այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

Ծառայության		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Հավելված N 4
«10» փետրվարի 2025 թ. կնքված
ՀՀԽԱ-ՄԱԾՁԲ-06/25 ծածկագրով պայմանագրի

Ավտոմեքենայի մակնիշը /տեսակը/՝ BMW 523i 1 հատ

SU-1, SU-2 ծառայությունների և SU-2 ընթացքում օգտագործվող պահեստամասերի քսայուղերի և այլ օժանդակ նյութերի անվանումները՝

Հ/Հ	Ծառայության տեսակներ	Հրավերով սահմանված մատուցվելիք ծառայության առավելագույն միավորի գինը (Ծ)
		BMW 523i (2006թ.)
		Գումարը (ՀՀ դրամ)
	SU-1 ներառվող ծառայությունների անվանում՝	
1	Բռնկման համակարգի ստուգում	5,400
2	Առջևի և հետևի կախոցների աշխատանքի ստուգում	5,400
3	Էլեկտրական համակարգի աշխատանքի ստուգում	5,400
4	Տարբեր ագրեգատների յուղերի որակի և մակարդակների ստուգում	5,400
	SU-2 ներառվող ծառայությունների անվանում	
5	Շարժիչի հանում և տեղադրում	81,000
6	Շարժիչի վերանորոգում	135,000
7	Շարժիչի բարձիկի հանում և տեղադրում	9,000
8	Բ/լիսեռի կափարիչի հանում և տեղադրում	9,000
9	Շարժիչի բլոկի գլխիկի հանում և տեղադրում	45,000
10	Շարժիչի հիդրոհրիչների փոխարինում	21,600
11	Վերևի կափարիչի միջադիրի փոխարինում	16,200
12	Ծնկաձև լիսեռի առջևի խցուկի փոփարինում	54,000
	Ղեկավարման, սնման և յուղման համակարգ	
13	Յուղի և յուղի զտիչի փոխարինում	900
14	Սառեցման հեղուկի փոխարինում	900
15	Ղեկավարման բլոկի վերանորոգում	58,500
16	Օդի զտիչի փոխարինում	900
17	Սրահի զտիչի փոխարինում	900
18	Ինժեկտորի ֆորսունկաների փոխարինում	6,300
19	Ինժեկտորի ֆորսունկաների մաքրում	67,500
20	Բենզամղիչի փոխարինում	14,400
21	Վառելիքի զտիչի փոխարինում	7,200
	Սառեցման և արտածման համակարգ	
22	Հովհարի փոկի հանում և տեղադրում	10,800
23	Հովհարի հանում և տեղադրում	19,800

	Ծառայության տեսակներ	Հրավերով սահմանված մատուցվելիք ծառայության առավելագույն միավորի գինը (Ծ)
		BMW 523i (2006թ.)
		Գումարը. (ՀՀ դրամ)
24	Ռադիատորի հանում և տեղադրում	22,500
25	Թերմոստատի փոխարինում	36,000
26	Ջրի պոմպի փոխարինում	22,500
27	Ընդարձակող բաքի փոխարինում	3,150
28	Խլարարի հանում և տեղադրում	18,000
29	Ռադիատորի փողրակի հանում և տեղադրում	4,500
	Կցորդում, ՓՏ և ԱՓՏ	
30	Աշխատանքային կամ գլխ. գլանի հանում և տեղադրում կամ փոխարինում	18,000
31	Կցորդման սկավառակների և առանցքակալի փոխարինում	10,800
32	ՓՏ-ի հանում և տեղադրում	54,000
33	ՓՏ-ի վերանորոգում	150,000
	Բաշխիչ փուփ, կարդանային լիսեռ	
34	Կարդանային լիսեռի հանում և տեղադրում	7,200
35	Կարդանային լիսեռի խաչուկի հանում և տեղադրում	4,500
	Առջևի և հետևի կամրջակներ	
36	Առջևի կամ հետևի կամրջակի հանում և տեղադրում	31,500
37	Առջևի կամ հետևի կամրջակի լիկատար քանդում և հավաքում	31,500
38	Առջևի կամ հետևի կամրջակի կիսասռնու հանում և տեղադրում	9,000
39	Կիսասռնու առանցքակալի փոխարինում	13,500
	Կախոց	
40	Տրավերսի հանում և տեղադրում	29,700
41	Ձախ կամ աջ հոդակապի հանում և տեղադրում	4,500
42	Անվակունդի առանցքակալի փոխարինում	13,500
43	Անվակունդի հանում և տեղադրում	10,800
44	Ձսպանակի հանում և տեղադրում	6,750
45	Առջևի ցնցամեղմիչի հանում և տեղադրում	6,750
46	Ներքևի լծակի հանում և տեղադրում	6,750
47	Ներքևի լծակի վռանների փոխարինում	6,750
48	Հետևի մետաղաձողի վռանի փոխարինում	6,750
49	Առջևի աջ կամ ձախ ձգանների հանում և տեղադրում	6,750
50	Միջին ձգանի հանում և տեղադրում	6,750

Հ	Ծառայության տեսակներ	Հրավերով սահմանված մատուցվելիք ծառայության առավելագույն միավորի գինը (Ծ)
		BMW 523i (2006թ.)
		Գումարը (ՀՀ դրամ)
51	Ճոճանակային լծակի հանում և տեղադրում	-
52	Վերևի լծակի հանում և տեղադրում	10,800
53	Վերևի լծակի վռանների փոխարինում	3,150
54	Գնդե հոդակապերի փոխարինում	5,400
55	Ծայրակաների հանում և տեղադրում	5,400
56	Առջևի կայունարարի հանում և տեղադրում	5,400
57	Առջևի կայունարարի վռանների փոխարինում	5,400
58	Առջևի կայունարարի կանգնակների փոխարինում	5,400
59	Առջևի կայունարարի կանգնակների հանում և տեղադրում	22,500
60	Հետևի ցնցամեղմիչի հանում և տեղադրում	9,000
61	Հետևի երկաթածողի հանում և տեղադրում	9,000
62	Անվաբացքի կարագավորում	9,000
	Ղեկային մեխանիզմ	
63	Ղեկային կալունի հանում և տեղադրում	63,000
64	Ղեկային կալունի վերանորոգում	85,500
	Արգելակային համակարգ	
65	Գլխ. գլանի հանում և տեղադրում	8,100
66	Վակուումային ուժեղարարի հանում և տեղադրում	8,100
67	Աշխատանքային գլանի հանում և տեղադրում	8,100
68	Արգելակային համակարգի օդահանում	8,100
69	Առջևի սուպորտի հանում և տեղադրում	8,100
70	Արգելակային փողրակի փոխարինում	8,100
71	Առջևի արգելակային կոճղակների փոխարինում	8,100
72	Հետևի կոճղակների փոխարինում	8,100
73	Առջևի արգելակային սկավառակի փոխարինում	8,100
74	Սկավառակի հղկում	8,100
75	Հետևի արգելակային սկավառակի հանում տեղադրում	8,100
76	Ձեռքի արգելակի ճոպանի հանում և տեղադրում	8,100
	Էլեկտրասարքավորում	

Հ/Հ	Ծառայության տեսակներ	Հրավերով սահմանված մատուցվելիք ծառայության առավելագույն միավորի գինը (Ծ)
		BMW 523i (2006թ.)
		Գումարը՝ (ՀՀ դրամ)
77	Էլեկտրասարքավորման վերանորոգում	10,800
78	Չափիչ սարքերի հանում և տեղադրում	10,800
79	Գեներատորի հանում և տեղադրում	10,800
80	Գեներատորի վերանորոգում	10,800
81	Գեներատորի փոկի փոխարինում	10,800
82	Մեկնարկիչի հանում և տեղադրում	10,800
83	Մեկնարկիչի վերանորոգում	10,800
84	Բռնկման կողպեքի հանում և տեղադրում	10,800
85	Ազդանշանի հանում և տեղադրում	10,800
86	Ապակելվացիչի շարժիչի հանում և տեղադրում	10,800
87	Վառոցքային լարերի հանում և տեղադրում	-
88	Էլ/հաղորդալարերի հիմնական խուրցի հանում և տեղադրում	45,000
89	Էլ/հաղորդալարերի երկրորդային խուրցի հանում և տեղադրում	31,500
90	Էլեկտրական տվիչների փոխարինում	4,500
91	Էլեկտրական անջատիչների փոխարինում	900
92	Վառոցքի մոմերի փոխարինում	4,500
93	Վառոցքի կոճի փոխարինում	1,800
94	Լամպի փոխարինում	1,800
	Այլ ծառայություններ	
95	Անվադողի վերանորոգում	1,800
96	Անիվի բալանսավորում	1,800
97	CO-զոդման աշխատանքներ, գին 1 քառ.սմ - ի համար	1,800
98	Խառատային աշխատանքներ 1ժ-ի համար	1,800
99	Փականագործի աշխատանքներ 1ժ-ի համար	4,500
100	Քարշարկի ծառայություն գին 1կմ, համար	567
101	Զասլոնկայի հանում, տեղադրում և լվացում	31,500
102	Ձեռքի արգելակի կարգաբերում	4,500

Հ	Ծառայության տեսակներ	Հրավերով սահմանված մատուցվելիք ծառայության առավելագույն միավորի գինը (Ծ)
		BMW 523i (2006թ.)
		Գումարը (ՀՀ դրամ)
103	Անվադողի փոխարինում	1,000
104	Բաշխիչ տուփի հանում տեղադրում	27,000
105	Խցուկի փոխարինում	1,500
106	Ներածման կոլեկտորի միջադիրի փոխարինում	15,000

Հ	Ծառայության տեսակներ	Հրավերով սահմանված մատուցվելիք ծառայության առավելագույն միավորի գինը (Ծ)
		BMW 523i (2006թ.)
		Գումարը. (ՀՀ դրամ)
	SU-2 ընթացքում օգտագործվող պահեստամասերի քսայուղերի և այլ օժանդակ նյութերի անվանումները	
	Շարժիչ	
1	Բարձիկ	40,500
2	Շարժիչի գլխիկի միջադիր	19,800
3	Շարժիչի վերանորոգման կոմպլեկտ	121,500
4	Շարժիչի բաշխիչ լիսեռ	130,500
5	Շարժիչի փական դուրս մղող	6,300
6	Շարժիչի փական ներս մղող	6,300
7	Շարժիչի փականի խցուկ	1,350
8	Ծնկաձև լիսեռ	202,500
9	Ծնկաձև լիսեռի խցուկ առջևի	10,800
10	Ծնկաձև լիսեռի խցուկ հետևի	13,500
11	Ծնկաձև լիսեռի արմատական ներդիրներ	22,500
12	Ծնկաձև լիսեռի շարժաթևային ներդիրներ	21,600
13	Մխոց	27,000
14	Մխոցային օղակներ	58,500
15	Ատամնանիվ	21,600
16	Շղթա	28,800
17	Հիդրոձգան	38,700
18	Հրիչ	7,200
19	Հիդրոհրիչ	10,800
20	Բաշմակ	13,500
21	Հանգստարար	16,200
22	Թափանիվ	108,000
23	Թափանիվի պսակ	25,200
24	Շարժաթև	28,800
25	Կարտերի միջադիր	6,300
26	Միջադիր	10,800
	Ղեկավարման, սնման և յուղման համակարգ	
27	Յուղ շարժիչի հանքային, 1 լիտր	3,150
28	Յուղ շարժիչի կիսասինթետիկ, 1 լիտր	4,050
29	Յուղ շարժիչի սինթետիկ, 1 լիտր	5,850
30	Յուղի զտիչ	10,800
31	Վառոցքի մոմ	12,150
32	Վառոցքի կոճ	25,200
33	Ինժեկտորի ֆորսունկա	14,400

/Հ	Ծառայության տեսակներ	Հրավերով սահմանված մատուցվելիք ծառայության առավելագույն միավորի գինը (Ծ)
		BMW 523i (2006թ.)
		Գումարը (ՀՀ դրամ)
34	Վառելանյութի մղիչ	46,800
35	Վառելանյութի զտիչ	31,500
36	Վառելանյութի փողրակ	5,400
37	Օդի զտիչ	11,700
38	Սրահի զտիչ	11,700
39	Ջերմաստիճանային տվիչ	9,900
40	Յուղի տվիչ	12,600
41	Բաշխիչ լիսեռի տվիչ	25,200
42	Օդի ծախսի տվիչ	58,500
43	Արագաչափի տվիչ	10,800
44	Հովհարի տվիչ	11,700
45	Ջրի տվիչ	10,800
46	Բենզոբաքի տվիչ	21,600
47	Մարման ընթացքի տվիչ	19,800
48	Ղեկավարման համակարգիչ	166,500
49	Դրոսելային փականի տվիչ	10,800
50	Թթվածնի տվիչ	32,400
	Սառեցման և արտածման համակարգ	-
51	Հովհար	28,800
52	Ռադիատոր	94,500
53	Ընդարձակող բաք	19,800
54	Ռադիատորի փողրակ	10,800
55	Թերմոստատ	21,600
56	Ջրի պոմպ	31,500
57	Սառեցման հեղուկ 1 լիտր	2,700
58	Փոկ	16,200
59	Ծորակ	18,900
60	Խլարարի ներդիր	5,400
61	Խլարարի կախոց	4,500
62	Անուր (Խամուտ)	450
63	Խլարար	76,500
64	Վառարանի ռադիատոր	58,500
	Կցորդում, ՓՏ և ԱՓՏ	-
65	Կցորդման աշխատանքային գլան	18,900
66	Կցորդման գլխավոր գլան	28,800

/<	Ծառայության տեսակներ	Հրավերով սահմանված մատուցվելիք ծառայության առավելագույն միավորի գինը (Ծ)
		BMW 523i (2006թ.)
		Գումարը (ՀՀ դրամ)
67	Կցորդման տանող սկավառակ	31,500
68	Կցորդման տարվող սկավառակ	40,500
69	Կցորդման առանցքակալ	16,200
70	Կցորդման փողրակ	10,800
71	ՓՏ-ի առջևի խցուկ	3,600
72	ՓՏ-ի հետևի խցուկ	4,500
73	ՓՏ-ի առանցքակալ	11,700
74	ՓՏ-ի առաջնային լիսեռ	58,500
75	ՓՏ-ի միջանկյալ լիսեռ	76,500
76	ՓՏ-ի եղանիկ	10,800
77	ՓՏ-ի ատամնանիվ	28,800
78	Համաժամիչ	13,500
79	Մուֆտ	28,800
80	ՓՏ-ի վերանորոգման կոմպլեկտ	58,500
81	Տրանսմիսսիոն յուղ, 1 լիտր	4,500
82	Հերմետիկ	3,600
	Բաշխիչ փուփ. կարդանային լիսեռ	-
83	Կարդանային լիսեռ	148,500
84	Էլաստիկ մուֆտ	49,500
85	Ռեդուկտոր	166,500
86	Գլխավոր փոխանցման ատամնանիվների կոմպլեկտ	130,500
87	Դիֆֆերենցիալ	81,000
88	Դիֆֆերենցիալի սատելլիտ	27,000
89	Տանող ատամնանիվի խցուկ	4,500
90	Տանող ատամնանիվի առանցքակալ	9,900
91	Դիֆֆերենցիալի առանցքակալ	10,800
92	Կիսասռնի	37,800
93	Կիսասռնու առանցքակալ	16,200
94	Կիսասռնու խցուկ	3,150
	Կախոց	-
95	Տրավերս	175,500
96	Ձախ կամ աջ հոդակապ	58,500
97	Ձախ կամ աջ հոդակապի փոշեթիկնոց	9,900
98	Անվակունդ	25,200
99	Անվակունդի խցուկ	3,600
100	Անվակունդի ներքին առանցքակալ	16,200
101	Անվակունդի արտաքին առանցքակալ	16,200
102	Ձսպանակ	31,500
103	Առջևի հարվածամեղմիչ	49,500

Հ/Հ	Ծառայության տեսակներ	Հրավերով սահմանված մատուցվելիք ծառայության առավելագույն միավորի գինը (Ծ)
		BMW 523i (2006թ.)
		Գումարը (ՀՀ դրամ)
104	Հարվածամեղմիչի վռան	3,600
105	Ներքևի լծակ	49,500
106	Ներքևի լծակի վռան	7,200
107	Վերևի լծակ	36,000
108	Վերևի լծակի վռան	40,500
109	Գնդե հոդակապ	16,200
110	Առջևի կայունարարի վռան	5,400
111	Առջևի կայունարարի կանգնակ	16,200
112	Հետևի ցնցամեղմիչ	40,500
113	Հետևի մետաղաձող (շտանգա)	22,500
114	Հետևի մետաղաձողի (շտանգա) վռան	5,400
115	Աջ կամ ձախ ձգան	16,200
116	Ծայրակալ	13,500
117	Ձգան մեջտեղի	19,800
118	Մանեկ	2,500
119	Հեղյուս	2,500
	Ղեկային մեխանիզմ	-
120	Ղեկային կալուն	130,500
121	Ճոճանակ	22,500
122	Ճոճանակի վռան	5,400
	Արգելակային համակարգ	-
123	Գլխ. գլան	28,800
124	Վակուումային ուժեղարար	58,500
125	Բանվ. գլան	10,800
126	Արգելակային փողրակ	9,900
127	Առջևի արգելակային կոճղակների կոմպլեկտ	22,500
128	Հետևի արգելակային կոճղակների կոմպլեկտ	21,600
129	Առջևի արգելակային սկավառակ	40,500
130	Ձեռքի արգելակի ճոպան	25,200
131	Արգելակային հեղուկ, DOT-4 - 800գրամ	2,700
	Էլեկտրասարքավորում	-
132	Գեներատոր	121,500
133	Գեներատորի դիոդային կամրջակ	16,200
134	Գեներատորի ռելե	14,400
135	Գեներատորի փոկ	16,200
136	Գեներատորի առանցքակալ	7,200
137	Ստարտեր	112,500

Հ/Հ	Ծառայության տեսակներ	Հրավերով սահմանված մատուցվելիք ծառայության առավելագույն միավորի գինը (Ծ)
		BMW 523i (2006թ.)
		Գումարը (ՀՀ դրամ)
138	Ստարտերի ռելե	6,300
139	Ստարտերի ածուխ	11,700
140	Բենդեքս	19,800
141	Ստարտերի կցորդիչ (ավտոմատ)	22,500
142	Լամպ	10,800
143	Էլեկտրական անջատիչ	13,500
144	Էլեկտրական տվիչ	16,200
145	Հետընթացի տվիչ	14,850
146	Մարտկոց	63,000
147	Բռնկման կողպեք	58,500
148	Էլեկտրալարերի գլխավոր խուրց	112,500
149	Էլեկտրալարերի երկրորդային խուրց	103,500
150	Վառոցքային լարերի խուրց	28,800
151	Ազդանշան	11,700
152	Ապակելվացիչ	7,200
153	Ապակիների լվանալու հեղուկ *1 լիտր*	1,800
154	Ապակելվացիչի շարժիչ	12,600
155	Ապակեմաքրիչ խոզանակ *1 հատ*	5,400
156	Դռների կենտրոնական փական	22,500
157	Ազդանշանային համակարգ	54 000
158	Մագնիտոլա	58,500
159	Ներկ, լուծիչ, օժանդակ նյութեր *գին 1դ/մ վերանորգման համար*	5,400
160	Սրահի գորգերի կոմպլեկտ	37,800
161	Բաշխիչ տուփի խցուկ	6,000
162	Պատուհանի բռնակ	5,000
163	Ներածման կոլեկտորի միջադիր	8,000

Ծառայության մատուցման համար հրավերով սահմանված յուրաքանչյուր տեսակի առավելագույն միավոր գների հանրագումարը (ՆԳ) կազմում է 6,915,517.0 ՀՀ դրամ

Ծառայության տեսակները, ընտրված մասնակցի առաջարկած հանրագումարային գինը (ՄԳ) (ներառյալ՝ ըստ առանձին ծառայությունների) կազմում է 6,915,517.0 ՀՀ դրամ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

«Հանրային հեռարձակողի խորհրդի աշխատակազմ» ՊՀ

ք. Երևան, Ալեք Մանուկյան 5
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011430163
ՀՎՀՀ 01539597

Խորհրդի նախագահ՝ Արա Շիրինյան

/ստորագրություն/

Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ

«Գարանտ Մոթորս» ՍՊԸ

ք. Երևան, Թբիլիսյան խճ.20
Արդշինբանկ ՓԲԸ
Հ/Հ 2470075092810000
ՀՎՀՀ 01310872

Տնօրեն՝ Դավիթ Շախբազյան

/ստորագրություն/

Կ.Տ